

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴՍՏԱՐԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ
ԲԻՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

ԳԱԳԻԿ ՂԱԶԻՆՅԱՆ

Հոդվածում հեղինակը Վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակի վերլուծության հիման վրա ներկայացրել է երկրի բարձրագույն դատական ատյանի կազմավորման ինստիտուցիոնալ որոշ հիմնախնդիրներ: Մասնավորապես, դատական իշխանության արտաքին անկախության ապահովման համատեքստում իրավական քննադատության առարկա է դարձել ՀՀ Ազգային ժողովի կողմից Վճռաբեկ դատարանի նախագահի և դատավորների ընտրության ընթացակարգը: Երկրի բարձրագույն դատական ատյանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական կարևորագույն առաքելության հաշվառմամբ՝ ոչ իրավաչափ է գնահատվել վերջին օրենսդրական փոփոխություններով Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջներն անհամաչափ մեղմելը, իսկ հակակոռուպցիոն պալատի ձևավորումը ՀՀ վճռաբեկ դատարանում համարվում է խնդրահարույց:

Բանալի բառեր – *օրենքի միատեսակ կիրառություն, դատական իշխանության անկախություն, դատավորների ընտրության (նշանակման) ընթացակարգ, օրենսդիր իշխանություն, դատավորների (դատարանների) մասնագիտացվածություն, դատավորներին ներկայացվող պահանջներ, հակակոռուպցիոն պալատ*

ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական ատյանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է, որը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերանայելու միջոցով ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Իրավական համակարգերի գլոբալացման արդի պայմաններում բարձրագույն դատական ատյանին իրավունքի զարգացման և միասնական իրավաքաղաքականության (օրենքի միատեսակ կիրառության) ապահովման գործառնություններ վերապահելը և այս խնդրի արդյունավետ իրացման նպատակով դատավարական և ինստիտուցիոնալ

համապատասխան մեխանիզմներ ներմուծելը, կարծում ենք, իրավա-
չափ են չխոչընդոտելով, իհարկե, Վճռաբեկ դատարանի՝ որպես դա-
տական իշխանության բարձրագույն մարմնի կողմից նաև արդարա-
դատության գործառնության իրականացումը: Եվ, ըստ էության, հավա-
սարակչով կարգավորման այս գաղափարն է զարգացել 2015 թվա-
կանի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության
171-րդ հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանն
ապահովում է, մի կողմից՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական
ակտերի միատեսակ կիրառությունը, մյուս կողմից՝ վերացնում է մար-
դու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Պետք է նշել, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություննե-
րով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածը սահմանում էր, որ Հայաս-
տանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի
սահմանադրական արդարադատության հարցերից, Վճռաբեկ դատա-
րանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությու-
նը: Քննարկվող նորմի՝ նշված խմբագրությամբ պայմանավորված՝
Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ արդարադատության և օ-
րենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունների հա-
րաբերակցության հարցը տեսաբանների և պրակտիկ աշխատողների
կողմից լայն քննարկման առարկա էր դարձել¹: Այս սահմանադրաիրա-
վական նորմի վերլուծությունից բխում էր, որ Վճռաբեկ դատարանը ՀՀ
բարձրագույն դատական ատյանն է, հետևաբար, որպես դատական իշ-
խանության մարմին, կոչված էր իրականացնելու արդարադատությու-
նը: Սակայն միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ունի նաև օ-
րենքի միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրաիրավա-
կան առաքելություն: Եվ հստակ չէր, թե արդյոք Վճռաբեկ դատարանը
արդարադատություն իրականացնելով է ապահովում օրենքի միատե-
սակ կիրառությունը, թե օրենքի միատեսակ կիրառություն ապահովե-
լու եղանակով է վերջին հաշվով իրականացնում արդարադատություն:

Վճռաբեկ դատարանին վերապահված այս երկու գործառնությունների
համատեքստում հարց է ծագում, թե ինչպիսին պետք է լինի այս գոր-
ծառնությունների հարաբերակցությունը. արդյոք ք դրանցից որևէ մեկի արդ-
յունավետ իրականացումը պետք է դիտարկել որպես գերխնդիր և ա-
պահովել դրա իրացումը նույնիսկ արդարադատության շահերի հաշ-
վին, թե՞, օրինակ, վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կանո-
նակարգումը պետք է իրականացնել այն հաշվով, որ բացառվի ընտրո-
ղական արդարադատության իրականացումն այն պարագայում, երբ

¹ Տե՛ս **Ա. Ս. Ղամբարյան**, Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրա-
պետությունում (համատեսական և մեթոդաբանական հիմնախնդիրներ), Եր., 2013, էջ
258-280, **Վ. Վ. Հովհաննիսյան**, ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի նորմերի
միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական խնդրի իրացումը
քաղաքացիական դատավարությունում // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավա-
գիտություն», № 1 (19), Եր., 2016, էջ 64-75:

խոսքը անձի հիմնարար իրավունքների և օրինական շահերին առնչվող դատական սխալների մասին է, այսինքն՝ երբ հնարավոր են դատական սխալի առկայության այնպիսի փաստեր, որոնք կապված չլինեն օրենքի միատեսակ կիրառության (իրավունքի զարգացման) ապահովման անհրաժեշտության հետ, և մյուս կողմից՝ անկախ դատական սխալի առկայությունից՝ նախատեսված լինի սույլ օրենքի միատեսակ կիրառության ապահովման հիմքով բողոքը վարույթ ընդունելու օրենսդրական հնարավորություն: Չխորանալով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կարգավորումների մեջ, ինչը կարող է մեկ այլ հոդվածի շրջանակում գիտական քննարկման առարկա լինել, այդուհանդերձ, կարող ենք նախնական դիտարկում անել առ այն, որ թերևս վերջին պայմանին չի բավարարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի այն կարգավորումը, համաձայն որի՝

«1. Վճռաբեկ դատարանը բողոքն ընդունում է վարույթ, եթե գալիս է հետևության, որ

1) վերաքննիչ դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, կամ առերևույթ առկա է բողոքարկվող դատական ակտը ոչ իրավաչափ դարձնող որևէ փաստական կամ իրավական հանգամանք, և միաժամանակ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար, կամ

2) առերևույթ լուրջ դատական սխալ թույլ տալու հետևանքով կամ առերևույթ որևէ լուրջ փաստական կամ իրավական հանգամանք ի հայտ գալու ուժով կայացված դատական ակտը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը»:

Այս նորմի բովանդակությունից բխում է, որ օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի միատեսակ կիրառության համար վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար պետք է առերևույթ առկա լինի վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալ այն դեպքում, երբ իրավունքի զարգացման համատեքստում կարող է առաջանալ օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր՝ անկախ ստորադաս դատարանի կողմից դատական սխալ թույլ տրված լինելու կամ չլինելու հանգամանքից:

Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակին այս թեկուզև հպանցիկ անդրադարձը պայմանավորված է նրանով, որ երկրի բարձրագույն դատական աստիճանի գործառնությունների հստակ ընկալումից է մեծապես կախված վճռաբեկության՝ որպես դատական ակտերի վերանայման ձևի համարժեք բովանդակային օրենսդրական կանոնակարգումը: Այսպես, օրինակ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրաիրավական գործառնությոը հանգեցրել է

նրան, որ եթե նախքան 2006 թվականի հուլիսի 7-ի օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները գործում էր վճռաբեկ բողոքարկման ազատության սկզբունքը, և օրենքով նախատեսված ձևական պահանջները բավարարող բողոքն անվերապահորեն ընդունվում էր վարույթ և դառնում Վճռաբեկ դատարանի քննարկման առարկա, ապա նշված օրենքով ներդրվեց դատական ակտերի բողոքարկման թույլատրական (դիսկրեցիոն) կարգ, որի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար այն պետք է համապատասխանի բովանդակային որոշակի չափանիշներին: Նշված փոփոխությունը պայմանավորված էր նրանով, որ դատական իշխանության բարձրագույն մարմնի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման (իրավունքի զարգացում) գործառույթի իրականացումը պահանջում է մշակել վերջինիս ծանրաբեռնվածության նվազեցման համապատասխան մեխանիզմների, այդ թվում՝ նախատեսել բողոքը վարույթ ընդունելու և, ըստ այդմ, դատական ակտը վերանայելու հայեցողական լիազորություններ²: Եվ առհասարակ, օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթի արդյունավետ իրականացումը ենթադրում է ոչ միայն դատավարական, այլ նաև ինստիտուցիոնալ, կազմակերպարկական համապատասխան հիմքերի ու պայմանների առկայություն: Այսպես, օրինակ, Վճռաբեկ դատարանին միասնական դատական պրակտիկա ձևավորելու գործառույթ վերապահելը ենթադրում է այս դատական ատյանի դատավորների կողմից դատական սխալներն ուղղելու հետ մեկտեղ նաև միասնական դատական պրակտիկա ձևավորելու գործառույթի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ մտավոր (մասնագիտական, վերլուծական, տեսական) և դատական իշխանության ոլորտում աշխատանքի լուրջ փորձառության առկայություն, ինչը ենթադրում է Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջների առավելագույն խստացում:

Վերոգրյալի համատեքստում, մեր կարծիքով, անընդունելի է օրենսդրական վերջին փոփոխությունների արդյունքում Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջների էական սահմանափակումը, ինչը հնարավորություն է տվել անհարկի ընդլայնել այն անձանց շրջանակը, ովքեր կարող են հավակնել դառնալու Վճռաբեկ դատարանի դատավոր:

Այսպես, մինչև 2022 թվականի փետրվարի 9-ին ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-24-Ն օրենքի ընդունումը գործող խմբագրությամբ Դատական օրենսգրքի 132-

² Տե՛ս **Գագիկ Ղազինյան, Տաթևիկ Սուջյան**, Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերի օրենսդրական կանոնակարգման առանձնահատկությունները ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում // «Պետություն և իրավունք», թիվ 2(64), 2014, էջ 5-16:

րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում էր. «Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում կարող են ընդգրկվել քառասուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով՝

1) համապատասխան մասնագիտացման դատավորը, որն ունի առնվազն 10 տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, որից առնվազն հինգը՝ դատավորի փորձառություն.

2) վերջին 10 տարվա ընթացքում պաշտոնավարած նախկին դատավորը, որն ունի առնվազն 10 տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, որից առնվազն հինգը՝ դատավորի փորձառություն.

3) իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը»:

Մինչդեռ վերոնշյալ օրենքի ընդունումից հետո նախատեսվեց. «Վճռաբեկ դատարանում դատավոր նշանակվելու համար առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակում կարող են ընդգրկվել ոչ միայն վերը նշված պահանջներին բավարարող անձինք, այլ նաև այն անձը, ով

ա) ունի իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և վերջին 10 տարիների ընթացքում առնվազն 8 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդել է իրավունք կամ գիտական աշխատանք է կատարել գիտական հաստատությունում, կամ

բ) ունի վերջին 12 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառություն»:

Վերոշարադրյալ նորմի վերլուծությամբ պարզ է դառնում, որ եթե ի սկզբանե Վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոն կարող էր զբաղեցնել միայն գործող դատավորը կամ երբևիցե դատավոր աշխատած անձը համապատասխան ստաժի առկայության պարագայում կամ իրավագիտության բնագավառում գիտական աստիճան և գիտական աշխատանքի համապատասխան փորձառություն ունեցող անձը, ապա նոր կարգավորումների համաձայն՝ այդպիսի հնարավորություն ընձեռվել է նաև վերջին 12 տարվա ընթացքում մասնագիտական աշխատանքի առնվազն 10 տարվա փորձառություն ունեցող ցանկացած անձի: Կարծում ենք՝ այս վերջին կարգավորումն առհասարակ համահունչ չէ երկրի բարձրագույն դատական ատյանի կարգավիճակին և դրանով պայմանավորված՝ այն բեռին, որ դրված է այս ատյանի դատավորների վրա: Նախկին կարգավորումներն իրավաչափորեն սահմանափակում էին Վճռաբեկ դատարանի դատավորների հավակնորդների շրջանակը՝ դրանում ներառելով բացառապես այն անձանց, ով-

քեր իրենց գիտական գործունեության կամ որպես դատավոր մասնագիտական փորձառության ուժով կարող էին լավագույնս իրականացնել երկրի բարձրագույն դատական ատյանին վերապահված կարևորագույն առաքելությունը: Այնինչ, այս նոր կարգավորումների պարագայում գործնականում հնարավորություն է ընձեռվել տասը տարվա մասնագիտական փորձառություն ունեցող ցանկացած անձի, անկախ այդ փորձառության տեսակից, հավակնելու Վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոնին:

Այս առնչությամբ կարևոր է փաստել, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 25-ի թիվ ՀՕ-197-Ն օրենքի ընդունումը համապատասխան ստաժի առկայության պարագայում գործող կամ նախկին դատավորի հետ Վճռաբեկ դատարանի դատավորի պաշտոնին կարող էր հավակնել իրավագիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող և առնվազն 10 տարի բարձրագույն ուսումնական հաստատությունում իրավունք դասավանդած կամ գիտական հաստատությունում գիտական աշխատանք կատարած անձը: Դեռ ավելին, ժամանակին ՀՀ արդարադատության խորհրդում քննարկվում էր առանձին քվոտա սահմանելու հարցը առհասարակ իրավագիտության դոկտորի գիտական աստիճան ունեցող անձանց համար (դատավորների ընդհանուր թվի 1/3-րդը)՝ դարձյալ պայմանավորված Վճռաբեկ դատարանին վերապահված հատուկ սահմանադրական առաքելությամբ:

Վերոնշյալ կարգավորման՝ խնդրահարույց լինելու ապացույցը Վճռաբեկ դատարանի վարչական և հակակոռուպցիոն պալատի դատավորների կազմի՝ բոլորովին վերջերս տեղի ունեցած համալրումն էր, երբ դատավորի պաշտոնում երբևիցե չաշխատած կամ գիտական աստիճան չունեցող անձինք հնարավորություն ստացան զբաղեցնելու երկրի բարձրագույն դատական ատյանի դատավորի պաշտոնը:

Վերը հիշատակված՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի տեսանկյունից խնդրահարույց է նաև 2022 թվականի փետրվարի 9-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-24-Ն օրենքով Վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն պալատի կազմավորումը: Խնդիրն այն է, որ թե՛ կոռուպցիոն և թե՛ բոլոր այլ հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունը նյութական և դատավարական առումով իրականացվելու է գործող քրեական և քրեադատավարական օրենսդրության հիման վրա, ուստի երկրի բարձրագույն դատական ատյանում նշված գործերով մասնագիտացված պալատի ձևավորումը առհասարակ հիմնավորված չէ և կարող է հանգեցնել վերոնշյալ օրենսդրության տարաբնույթ մեկնաբանության քրեական և

հակակոռուպցիոն պալատների կողմից³: Իսկ ինքնին Վճռաբեկ դատարանի երկու պալատների միջև հակասական պրակտիկայի ձևավորումը կարող է չիք դարձնել Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման և միասնական դատական պրակտիկայի ձևավորման գործառույթի իրականացումը:

Այս առնչությամբ տեղին է հիշատակել Եվրոպայի խորհրդի՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (այսուհետ նաև՝ ԵԴԽԽ) 2012 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 15 կարծիքը, որում հստակ եզրահանգում է կատարվել, որ մասնագիտացված դատարանները և դատավորները պետք է նախատեսվեն բացառապես, երբ դա անհրաժեշտ է՝ պայմանավորված օրենքի կամ փաստերի բարդությամբ ու առանձնահատկությամբ և հետևաբար՝ արդարադատության պատշաճ իրականացման պահանջի առկայությամբ: Նույն կարծիքում, իբրև մասնագիտացված դատարաններ (դատավորներ) ստեղծելու գաղափարի բացասական կողմ, նշվում է, որ մասնագիտացված դատավորները, որպես կանոն, հակված են զարգացնելու իրենց ոլորտի համար տիպական գաղափարներ, որոնք կարող են անհայտ լինել մյուս դատավորներին: Դա կարող է հանգեցնել նյութական և դատավարական իրավունքի մասնատման՝ մեկուսացնելով մասնագիտացված դատավորներին մյուս ոլորտներում առկա իրավական իրողություններից և, ի վերջո, ընդհանուր սկզբունքներից և հիմնարար իրավունքներից: Այս տարանջատվածությունը կարող է արժեզրկել իրավական որոշակիության սկզբունքը⁴:

ԵԴԽԽ այս դիտարկման հաշվառմամբ՝ կարող ենք փաստել, որ զուտ հանցագործության տեսակով պայմանավորված՝ երկրի բարձրագույն դատական ատյանում կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացված պալատի ձևավորումն իրավական նախադրյալներ չունի ծառայելու խիստ առանձնահատուկ գործերով արդարադատության որակի ապահովման նպատակին, որին ի վերջո ծառայում է առհասարակ մասնագիտացումը: Հայաստանյան պրակտիկայում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության՝ ինստիտուցիոնալ առումով մասնագիտացված հակակոռուպցիոն դատական համակարգի ձևավորմանը չի նախորդել նյութա-

³ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատում գործում են կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմեր՝ յուրաքանչյուրը հինգ դատավորի թվակազմով, որոնք բողոքը քննելիս և որոշումներ ընդունելիս գործում են որպես Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատ»: Մույն հոդվածի շրջանակում անդրադարձել ենք հակակառուպցիոն պալատի ստեղծման իրավաչափությանը կոռուպցիոն հանցագործությունների քննության մասով:

⁴ Տե՛ս OPINION (2012) NO. 15 of the Consultative Council of European Judges on the Specialisation of Judges, 13.11.2012, հասանելի է՝ <https://rm.coe.int/ccje-opinion-2012-no-15-on-the-specialisation-of-judges/16809f0078>

կան կամ դատավարական հատուկ կարգավորումների նախատեսումը, որոնց ուժով արդարացված կլինեն մասնագիտացված դատարանների ստեղծումը: Կարծում ենք՝ կոռուպցիոն հանցագործությունների քննությունը չի ենթադրում կիրառման ենթակա օրենսդրության ուժով օրենքի կամ դատավարական ընթացակարգերի կիրառման այնպիսի առանձնահատկությունների իմացություն, որոնց ուժով իրավաչափ կլինեն մասնագիտացված պալատի առկայությունը Վճռաբեկ դատարանում: Ընդ որում, ինչպես արդեն նշվել է, երկրի բարձրագույն դատական ատյանում խնդիրն առավել սրվում է վերջինիս ունեցած՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթով, որը լրջորեն կարող է վտանգվել Վճռաբեկ դատարանի տարբեր պալատների կողմից նույն օրենսդրության տարաբնույթ մեկնաբանության և կիրառության հետևանքով:

Հակակոռուպցիոն պալատի ձևավորումը արդարացված չէ նաև դատավորների միջև ծանրաբեռնվածության հավասարաչափ բաշխման տեսանկյունից: Այսպես, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը կազմված է վեց, իսկ հակակոռուպցիոն պալատը՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործեր քննող հինգ դատավորներից այն պարագայում, երբ ՀՀ քրեական օրենսգրքին կից թիվ 1 Հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների քանակը 40 է, ինչը կազմում է նույն օրենսգրքով նախատեսված հանցագործությունների մոտ 10-12 տոկոսը:

Ցանկացած ատյանի դատարանի և առավել ևս Վճռաբեկ դատարանի կողմից իր սահմանադրական գործառույթների արդյունավետ իրականացման համար չափազանց կարևոր է դատարանի և դատավորների անկախության ապահովումը:

Դատական իշխանության մասնավորապես արտաքին անկախությունը սկսվում է դատական համակարգի կազմավորումից⁵: Եվ այս առումով դատական իշխանության անկախության ապահովման տեսանկյունից չափազանց կարևոր է ի սկզբանե դատական համակարգի կազմավորման այնպիսի եղանակի ընտրությունը, որը զերծ կպահի պետական իշխանության որևէ թևի, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի միջամտությունը դատական իշխանության ձևավորման գործընթացին:

Դատական համակարգի կազմավորման եղանակները թեև տարբեր են, այդուհանդերձ առանձնացվում են ընտրական և ուղղակի նշանակման համակարգերը⁶:

⁵ Ավելի մանրամասն տե՛ս **Գագիկ Ղազինյան**, Դատական իշխանության անկախության ապահովման սահմանադրական հիմքերը // «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», № 3, 2017, էջ 42-55:

⁶ Տե՛ս Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) թիվ 403/2006 կարծիքը, հունիսի 22, 2007, CDL-AD(2007)028, հասանելի է՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdfid=CDL-AD\(2007\)028-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdfid=CDL-AD(2007)028-e)

Ընտրական համակարգ ունեցող երկրներում դատավորներին ընտրում է ուղղակիորեն ժողովուրդը կամ պառլամենտը: Այս համակարգը Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Վենետիկի հանձնաժողով) գնահատմամբ առավել ժողովրդավարական և լեգիտիմ բնույթ է հաղորդում գործընթացին, սակայն կարող է ներգրավել դատավորներին նաև քաղաքական արշավների և հանգեցնել գործընթացի քաղաքականացման:

Ինչպես իրավամբ դիտարկում է Վենետիկի հանձնաժողովը, պառլամենտի ներգրավումը կարող է հանգեցնել դատավորների նշանակման գործընթացի քաղաքականացման: Եվրոպական չափանիշների համաձայն՝ դատավորների ընտրությունը և առաջխաղացումը պետք է հիմնված լինեն «արժանիքների վրա՝ հաշվի առնելով որակավորումները, ազնվությունը, կարողությունը և արդյունավետությունը»⁷:

Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ՝ պառլամենտի կողմից ընտրությունները հայեցողական բնույթի են, հետևաբար՝ էթե նույնիսկ առաջարկներն արվում են դատական խորհրդի կողմից, չի կարող բացառվել, որ պառլամենտը ձեռնպահ կմնա թեկնածուներին մերժելուց: Ուստի, քաղաքական նկատառումները կարող են գերակայել օբյեկտիվ չափանիշին: Վենետիկի հանձնաժողովը գտել է, որ պառլամենտը անշուշտ ավելի ներքաշված է քաղաքական խաղերի մեջ, և դատավորների նշանակումները կարող են հանգեցնել քաղաքական բանակցությունների պառլամենտում, երբ պառլամենտի յուրաքանչյուր անդամ կարող է ցանկանալ ունենալ իր դատավորը⁸:

Վենետիկի հանձնաժողովի գնահատմամբ՝ դատավորների նշանակման եղանակների առնչությամբ պետք է դրվի տարբերակում պառլամենտական և կիսանախագահական համակարգերի միջև, քանի որ առաջինի դեպքում նախագահն առավելապես ձևական լիազորություններ ունի, որպես կանոն հեռու է կուսակցական քաղաքականությունից, հետևաբար՝ վերջինիս ազդեցությունն ավելի քիչ վտանգավոր է դատական իշխանության անկախության տեսանկյունից: Այլ հարց է, թե որքանով է անկախ երկրի ղեկավարը նշանակման հարցում: Ուստի պետք է ապահովել, որ այս գործընթացում գլխավոր դերը վերապահվի անկախ մարմնին՝ դատական խորհրդին: Այս խորհրդի առաջարկները պետք է մերժվեն բացառիկ դեպքերում, և նախագահը չպետք է լիազորություն ունենա նշանակել ցուցակում չընդգրկված թեկնածուի⁹:

Վերոշարադրյալի լույսի ներքո որոշակիորեն խնդրահարույց է թվում 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահ-

⁷ Recommendation No. R (94)12 of the Committee of Ministers of the Council of Europe on the independence, efficiency and the role of judges.

⁸ St u Venice Commission, Opinion on the Draft Law on Judicial Power and Corresponding Constitutional Amendments of Latvia, CDL-AD (2002) 26, para. 22:

⁹ St u Venice Commission, Opinion on the Provisions on the Judiciary in the Draft Constitution of the Republic of Serbia, CDL-AD(2005)023, para. 17:

մանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի այն կարգավորումը, համաձայն որի՝ «Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար Բարձրագույն դատական խորհրդի ներկայացրած երեք թեկնածուների թվից»: Խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում իշխանությունների տարանջատման նոր համատեքստում բարձրագույն դատական աստիճանի կազմավորման հարցում օրենսդիր մարմնին լուրջ դերակատարում վերապահելը խիստ խոցելի, անընդունելի կարգավորում է դատական իշխանության այս մարմնի արտաքին անկախության երաշխավորման տեսանկյունից: Խնդիրն առավել սրվում է այն առումով, որ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամների ուղիղ կեսին ընտրում է ՀՀ Ազգային ժողովը: Ստացվում է, որ կիսով չափ ՀՀ Ազգային ժողովի կողմից ձևավորվող Բարձրագույն դատական խորհուրդն է նույն Ազգային ժողովին առաջադրելու Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուին:

Խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում, կարծում ենք, լավագույն լուծումը կարող էր լինել նաև Վճռաբեկ դատարանի նախագահի և դատավորների նշանակումը ՀՀ նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի ներկայացմամբ: Վերոհիշյալ դիտարկումը հիմնավորվում է նրանով, որ խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում նախագահն այլևս չի ասոցացվում գործադիր իշխանության հետ, և վերջինիս՝ դատական համակարգի կազմավորման գործընթացին որոշակի լիազորությունների վերապահումը չի կարող գնահատվել որպես գործադիր իշխանության անհարկի միջամտություն դատական իշխանության անկախությանը, ինչն առկա էր կիսանախագահական կառավարման ձևի պարագայում:

Լուրջ խնդիրներ է առաջացնում նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից Վճռաբեկ դատարանի դատավորի յուրաքանչյուր թափուր տեղի համար երեքական թեկնածուներ առաջարկելու և այդ թեկնածուներից միայն մեկին Ազգային ժողովի կողմից ընտրելու կանոնը: Այս կարգավորումից բխում է, որ եթե, օրինակ, Վճռաբեկ դատարանի դատավորի թափուր պաշտոնի համար դիմել են երեքից պակաս թեկնածուներ, ապա այդ թափուր տեղը չի կարող համալրվել, և յուրաքանչյուր անգամ պետք է նոր մրցույթ հայտարարվի: Բացի այդ, Վճռաբեկ դատարանի դատավորի յուրաքանչյուր թափուր տեղի համար երեքական թեկնածու առաջադրելու պարագայում Ազգային ժողովի պատգամավորը նաև գրկվում է իր համար նախընտրելի թեկնածուների օգտին քվեարկելու հնարավորությունից, եթե նրանցից առնվազն երկուսը կամ բոլորը ներառված են նույն եռյակի կազմում:

Այս խնդիրները մեր՝ որպես Հայաստանի Հանրապետության նա-

խագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամի կողմից բարձրացվել է նաև հանձնաժողովի նիստերի ժամանակ այն դիտարկմամբ, որ նման կարգավորումը խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում անընդունելի է իշխանության օրենսդիր և դատական թևերի հավասարակշռման տեսանկյունից, քանի որ ՀՀ Ազգային ժողովը լուրջ և վտանգավոր լծակ է ստանում դատական իշխանության կազմավորման գործընթացում, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու է գործընթացի քաղաքականացման, ինչին որ մենք ականատես ենք այսօր:

Անփոփելով կարող ենք փաստել, որ ցանկացած ատյանի դատարանի և հատկապես երկրի բարձրագույն դատական ատյանի կողմից իրեն վերապահված գործառնությունների արդյունավետ իրականացումը, ի թիվս մի շարք այլ գործոնների, մեծապես կախված է նաև ինստիտուցիոնալ անհրաժեշտ նախադրյալների առկայությունից: Իսկ դա իր հերթին ենթադրում է, որ դատական իշխանության կրողին՝ դատավորին, ներկայացվող պահանջները, դատական իշխանության կազմավորման, մասնավորապես դատավորների նշանակման ընթացակարգը պետք է լինեն դատական իշխանությանն օրենքով վերագրվող գործառնությունների պատշաճ իրականացման իրավական հիմքերը:

Այս առումով քննարկման առարկա դարձնելով Վճռաբեկ դատարանի կողմից արդարադատության և օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառնությունների արդյունավետ իրականացման ինստիտուցիոնալ նախադրյալների առկայության հարցը՝ կարող ենք փաստել, որ միանշանակ անընդունելի է Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները խիստ անհամաչափ մեղմելը, երբ օրենսդրորեն իրավական նախադրյալներ են ստեղծվում ոչ իրավաչափորեն ընդլայնելու այն անձանց շրջանակը, ովքեր կարող են հավակնել համալրելու երկրի բարձրագույն դատական ատյանի դատավորների շարքերը: Վճռաբեկ դատարանի դատավորների նշանակման իրավական ընթացակարգի թերևս առանցքային խնդիրը խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում Վճռաբեկ դատարանի դատավորներին ընտրելու լիազորությունը ՀՀ Ազգային ժողովին վերապահելն է, որով լրջորեն վտանգվում է դատական իշխանության՝ իշխանության ցանկացած այլ թևից անկախ լինելու սահմանադրական պահանջը: Մինչդեռ խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում դատական իշխանության արտաքին անկախության ապահովման այս խնդիրը կարող էր լուծվել՝ դատավորների նշանակման լիազորությունը բացառապես երկրի նախագահին վստահելով, ով այլևս չի ասոցացվում գործադիր իշխանության հետ:

Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնության իրականացման ճանապարհին լուրջ խոչընդոտ է լինելու նաև անհրաժեշտ իրավական նախադրյալների բա-

ցակայության պայմաններում հակակոռուպցիոն պալատի ձևավորումը: Մինչդեռ ընդունելի տարբերակ կարող էր լինել Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորների կազմի համալրումը, ինչը հնարավորություն կտար որոշակիորեն հաղթահարելու դատարանի ծանրաբեռնվածությունը՝ ավելի շատ ռեսուրսներ կենտրոնացնելով երկրի բարձրագույն դատարանի կողմից իր սահմանադրական գործառույթներն արդյունավետ իրականացնելու վրա:

ГАГИК КАЗИНЯН – *Некоторые теоретические и практические проблемы реализации функций, вытекающих из конституционного статуса Кассационного суда РА.* – В статье автор проанализировал некоторые институциональные вопросы формирования высшей судебной инстанции страны в свете анализа конституционного статуса Кассационного суда. В частности, в контексте обеспечения внешней независимости судебной власти предметом правовой критики стал порядок избрания Национальным Собранием РА председателя и судей Кассационного суда. Принимая во внимание важнейшую конституционную миссию высшей судебной инстанции страны по обеспечению единообразного применения закона, смягчение требований к кандидату на должность судьи Кассационного суда в результате последних законодательных изменений было признано неправомерным. На том же основании создание антикоррупционной палаты в Кассационном суде РА было оценено как проблематичное.

Ключевые слова: *единообразное применение закона, независимость судебной власти, порядок избрания (назначения) судей, законодательная власть, специализация судей (судов), предъявляемые к судьям требования, антикоррупционная палата*

GAGIK GHAZINYAN – *Some Theoretical and Practical Issues of Implementation of the Functions Arising from the Constitutional Status of the RA Court of Cassation.* – In the article, the author has analyzed some institutional issues of the formation of the country's highest court in the light of the analysis of the constitutional status of the Court of Cassation. In particular, in the context of ensuring the external independence of the judiciary, the procedure for the selection of the president and judges of the Court of Cassation by the RA National Assembly has become the subject of legal criticism. Taking into account the most important constitutional mission of the country's highest court to ensure the uniform application of the law, the mitigation of the requirements for the candidate of the judge of the Court of Cassation as a result of the recent legislative changes was assessed as illegitimate. With the same observation, the formation of the anti-corruption chamber in the RA Court of Cassation was assessed as problematic.

Key words: *uniform application of the law, independence of the judiciary, procedure for selection (appointment) of judges, legislative power, specialization of judges (courts), requirements for judges, anti-corruption chamber*